

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

H. L. H. Punekayal

See my son

891.995  
P-94

2011-07

ԴԵՆՐԻԿ ԲՈՒՄԱՆՅԱՆ

# ԿԱՌՈՒՑՈՒՄ



ԽԿ. Կ. ԳԱՅԶԵՂՅԱՆԻ

891.99  
Հ-1851

ՊԵՏՐՈՍ  
ՅԵՐԵՎԱՆ 1932



Քաղաքում այս  
մեր փոքրիկ,  
շենքերի դեմ  
բարձրացող,  
բանվորները  
կառուցող,  
քար են տաշում  
անդադար՝  
մուրճիկների  
հարվածով:

Շենքերի դեմ  
այդ լուս ե,  
աշխատում են  
միասին,  
վոմանք քարեր են  
ուսել,  
վոմանք փայտ են  
սղոցում,

ու տաք քրտինքն ե  
ծորում  
բանվորների  
յերեսին:

Արդեն կապել են  
նրանք  
պայմանագիր  
սոցմրցման,  
խոստացել են,  
թե կտան,  
այդ շենքերը  
կառուցվող,  
ժամանակին  
անպայման:


Դրա համար  
ամեն որ,  
ժամը յոթին,



քրտնաթոր  
աշխատանքի  
յեն գալիս  
և ինժեներ,  
և բանվոր,  
աշխատում են,  
վորպեսզի  
սոցմրցումը  
չփիժի:

Ահա յեղավ  
ընդմիջում.  
նախաճաշի  
զանգակի  
ձայնն ե ահա  
զողանջում:  
—վարպետ Խեչոն,  
մի տաշի,  
—կարն, չայլ

դես քաշի.  
ձայն են տալիս  
իրարու,  
և նստում են  
թեյելու:  
Թեյից հետո  
յեռանդով  
քար են կրում  
ուս ուսի,



վարպետները  
վորմանադիր  
յելում են վեր  
միասին:

Յեվ շարում են  
պատերը,  
տաշում են ելի  
քարեր,  
բարձրանում են  
որ-որի,  
բետոնակուռ  
մեծ շենքեր:

Մեկ-մեկ ժողով  
են անում,  
իրար լսում  
ու խոսում,  
թե վոնց անեն  
պլանը  
կատարեն տաս  
ամիսում:

Մեկ-մեկ գալիս են  
նրանց  
մանուկները  
ոգնության,




իրենց փոքրիկ  
ձեռներով  
ուզում են, վոր  
ոգուտ տան:

Կատարում են  
շատ թեթև  
գործեր, ինչ վոր  
կարող են,  
վոր մեծերը  
հեշտությամբ  
այդ շենքերը  
կառուցեն:

Ահա այստեղ,  
փողոցում,  
տրամվայ են  
կառուցում.  
աշխատում են  
ամեն որ  
բանվորները  
քրտնաթոր:

Մեկը քլունգն  
առած՝  
ճամբան հարթում  
ե գծի,



մեկը չափում  
ե ահա  
լայնքը քանդվող  
փողոցի:

Այն մասերում,  
ուր արգեն  
ճամբան վաղուց  
են հարթել,  
մեջ տեղերով  
փողոցի,  
գիծ են զցում  
յերկաթիւ:

Ու բրիգադ  
բրիգադի  
մրցման կանչեր են  
տալիս,  
տեսնեն թե ով  
շատ և լավ  
ճամբաները  
կհարթիւ:

Բանվորներից  
թե մեկը  
ծուլանա ու  
շաշխատի,


կբարձրանա  
անունը  
կախված մի ու  
տախտակիւ:  
Վոր նա զգա,  
հասկանա,  
յետ կանգնի իր  
արարքից,  
կրկին յենի,  
բարձրանա,  
չնահանջի  
շարքերից:

Իսկ ով համառ  
պայքարով  
ձեղքվածք չտա  
պլանում,  
նա իր պայծառ  
անունով՝  
մեզ հետ վեր ե  
բարձրանում:  
Մտածում են  
մի տեղ ել  
փողոցի մյուս  
ծայրից,  
զցեն ահա  
մի նոր ճյուղ,  
տրամվայի  
նախագիծ:

Այսպես, բոլորով  
մեկ տեղ,  
տրամվայ են  
կառուցում,  
ու փայլում են  
յերկաթե  
յերկու զույգ ուելս  
փողոցում:  
Վոր անցնի նա,  
ոլանա,  
տրամվայը  
շարունակ,  
վոր բանվորը  
իր գործից,  
աշխատանքից  
չուշանա:

Քաղաքից դուրս,  
անդադար,  
բացում են մի  
մեծ ուղի.

Դա գետնափոր  
ու յերկար  
նոր ճամբան ե  
ջրմուղի:



Այդ նոր ճամբով, թանգորներն ել  
վերևից, ջուրն ե գալիս  
յերգելով, և առանց տաք  
արևի՝  
տեղ ե հասնում  
տունելով:  
Նա գալիս ե  
ու թափվում  
ամբարը մեծ,  
անհատակ,  
հետո՝ մաս-մաս  
բաժանվում  
ու հոսում ե  
գետնի տակ:

Իսկ ձոր ճամբով, թանգորներն ել  
ջրմուղի,

պայմանագիր են  
կապած

աշխատում են  
միշտ, անվերջ,  
սոցմբցության  
մեջ մտած:

Վորպեսզի շուտ,  
ժամկետին,  
ճամբան հարթեն  
ջրմուղի,

վոր յեկող մեծ  
հնգամյակին,  
բացեն մի նոր,  
մեծ ուղի:

Իսկ ձորում այն,  
լեռան մոտ,  
քլունգներով են  
մրցում.

Նրանք լույսի,  
արևի  
կայաններ են  
կառուցում:

Պինամիտով,  
մուրճերով,  
կուրծքն են քանդում  
ժայռերի,  
և նոր ճամբան յեն  
տալիս,  
այդ հորդառատ  
ջրերին:



Այդպես թեքում են  
նրանք  
հունը հոսող  
այդ գետի,  
վոր բարձրանանք,  
բարձրանանք,  
ել չմնանք  
մենք հետին:  
Անիվերը  
անհամար  
դառնան արագ,  
ու աշխուժ,  
նոր արևը  
այս անմար,  
փայլի վորպես  
մի մեծ ուժ:

Հերոսներն  
այդ ձորի  
կառուցում են  
ու յերգում.  
և պայքարից  
աննահանջ,  
յերբեք, յերբեք  
չեն թեքվում:  
Քաղաքն այս  
բարձրացող  
այսպես դառնում ե  
հզոր,  
ու հին շենքերը  
խարխուլ.  
արդեն դարձել են  
անզոր.



Նրանց տեղը  
բազմահարկ  
նոր շենքեր են  
բարձրանում,  
թե գյուղ, թե հանք,  
թե քաղաք  
իր պլանն ե  
կատարում:

Այդպես՝ մենք միշտ  
յելնում ենք,  
ու բարձրանում ենք  
ահա,  
և կառուցում ենք  
խրոխտ,  
յերկաթակուռ  
մի քաղաք:



ԳԻՆ 50 ԿՈՊ.

РИС. В. КАЙФАДЖЯНА



Г. ТУМАНЯН  
СТРОЙКА

ГИЭ ССРАРМЕНИИ ЗРИВАНЬ 1932

Դաշնարկ 2743

Դաշնարկ 7554 (Բ)

Հպատ. 3278

Տրամ. 3000

ԱՐ. Դ. ՀԱԿՈՅԵՎԻ  
ՔԵԶՔԻ.ՅԻ ՅԵՇԱԾ ԵՎՐԵՑ

8770